

Վերջապէս եկեղեցւոյ ընդարձակ գաւթին մէջն է մեծ ու գեղեցիկ եկեղեցին Ս. Աւքսէնտ, եւ ասոր աւագ դռնէն ոչինչ հեռու՝ 10 քլաֆդէր խորունկ հին աղբիւր մը, որմէ Սուչավայի եւ շրջակայից ամենացուրտ ջուրը կը բղխէ:

Ամբողջն շրջապատող որմոյն ներքին կողմն մինչեւ ցայսօր կ'երեւան ամրական զինուորաց բնակութեանց մնացորդներն⁸⁶:

Պէտք է նաեւ յիշատակել՝ որ շէնքին արեւմտեան պատը կը զարդարէ քարեղէն ոլորաձեւ կարմրագոյն պսակ մը:

Այս եկեղեցեաց զինութեան հեղինակին եւ ժամանակին վրայ Հայոց եւ Ռոմանացւոց քով անմիաբան աւանդութիւններ կան, զոր հոս համառօտիւ յառաջ կը բերենք, թէ եւ պատմական արժէք չունենան:

Հայ աւանդութիւնն Ս. Աւքսէնտի եկեղեցւոյն հիմնադիրը չի ճանչնար զԱկօբչին, այլ կ'աւանդէ թէ երեք եղբարք՝ Յակոբ, Աւքսէնտ եւ Գրիգոր 1606ին այս տեղը գնեցին, եւ Յակոբ շինեց Սքէյա նայող կողման Ս. Յակոբայ նուիրեալ անական մատուն, Աւքսէնտ՝ գաւթին մէջի Ս. Աւքսէնտի մեծ եկեղեցին, եւ Գրիգոր՝ դէպ ի քաղաք հայող Ս. Գրիգոր Լուսաւորչի, Հայոց առաքելոյն, աշտարակի մատուռն⁸⁷:

Տեղական Ռոմանացւոց աւանդութիւնն բողբոջին հակառակ է Հայոց աւանդութեան: Ռոմանացիք կ'աւանդեն թէ Ս. Յակոբայ եկեղեցին յառաջագոյն ռոմանական-որթոդոքս եկեղեցի էր Ննման Ս. Կուսի, Ս. Աւքսէնտի եկե-